

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Բնական աշխարհահամակարգ է:

- 1) ջրամբարը
- 2) արոտավայրը
- 3) ճահիճը
- 4) քաղաքը

2


Ընտրել մոլորակների ճիշտ շարքը՝ ըստ Արեգակից ունեցած հեռավորության:

- 1) Փայլածու, Արուսյակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 2) Հրատ, Փայլածու, Երկիր, Արուսյակ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 3) Փայլածու, Երկիր, Արուսյակ, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 4) Արուսյակ, Փայլածու, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան

3

Նկար 1- ում պատկերված է.

- 1) համադրման սանդղակ
- 2) ռելիեֆի կտրվածք՝ պրոֆիլ
- 3) լեռնագիծ
- 4) հորիզոնական



նկար 1

4

Հյուսիսային կիսագնդում ծառի կամ քարի ո՞ր կողմն է առավել շատ մամուկալված.

- 1) հարավային
- 2) արևմտյան
- 3) հյուսիսային
- 4) արևելյան

5

Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը մերձակետում լինում է.

- 1) մարտի 21-ին
- 2) հունիսի 22-ին
- 3) հունվարի 3-ին
- 4) հուլիսի 5-ին

6

1 : 900 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 4 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 360 կմ
- 2) 3600 կմ
- 3) 3,6 կմ
- 4) 36 կմ

7

Ի՞նչ ծագման ապարներ են պեմզան ու պեռլիտը:

- 1) օրգանական նստվածքային
- 2) անօրգանական նստվածքային
- 3) հրային
- 4) փոխակերպային


8

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ծալքաբեկորավոր լեռներն առաջացել են տեկտոնական շարժումների հետևանքով:
- 2) Երկրագնդի վրա առավել հաճախ երկրաշարժեր լինում են պլատֆորմներում:
- 3) Աշխարհագրական թաղանթի առաջացման և զարգացման ամբողջ ընթացքը բաժանվում է 3 փուլի՝ երկրաբանական, կենսաբանական, մարդածին:
- 4) Հարթավայրեր առաջանում են ջրիկ մագմայի արտահոսման պատճառով:

9

Նկար 2 – ում ո՞ր թվով է նշված հարավային բարեխառն ջերմային գոտին:



նկար 2

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Կուրոսիո ծովային հոսանքը:
- 2) Աֆրիկայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Մոմայիական ծովային հոսանքը:
- 3) Եվրասիայի արևմտյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Հյուսիսատլանտյան ծովային հոսանքը:
- 4) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի կլիմայի վրա բացասական ազդեցություն ունի Պերուական ծովային հոսանքը:

11

Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 15 մ² է, ջրի արագությունը՝ 2 մ/վ: Որքա՞ն է գետի ջրի ծախսը:

- 1) 9,5 մ³/վ
- 2) 45 մ³/վ
- 3) 7,5 մ³/վ
- 4) 30 մ³/վ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամուդարյա և Սիրդարյա գետերը հորդանում են ամռանը:
- 2) Եփրատ և Տիգրիս գետերը հորդանում են ձմռանը:
- 3) Հուանհե ու Յանցզի գետերը հորդանում են աշնանը:
- 4) Ամազոն և Կոնգո գետերը հորդանում են գարնանը:

13

Բնության բաղադրիչների ո՞ր զուգորդությունն է ճիշտ:

- 1) տունդրա-կմախքային հող-լորենի, հացենի
- 2) տայգա-պողոզային հող-եղևի, սոճի
- 3) տափաստան-կարմրահող-փետրախոտ, սիզախոտ
- 4) անապատ-սևահող-օշինդր, ուղտափուշ

14


Ինչպե՞ս է կոչվում ներկայիս երկրաբանական դարաշրջանը:

- 1) Մեզոզոյան
- 2) Արխեյան
- 3) Պրոտերոզոյան
- 4) Կայնոզոյան

15

Մակրնթացության և տեղատվության հերթափոխը աշխարհագրական թաղանթի ո՞ր հատկանիշն է արտահայտում:

- 1) ռիթմիկություն
- 2) զոնայականություն
- 3) գոտիականություն
- 4) միասնականություն



քարտեզ 1

16

Քարտեզ 1-ում ո՞ր կղզին է նշված Բ տառով:

- 1) Կիպրոս
- 2) Սարդինիա
- 3) Կրետե
- 4) Սիցիլիա

17

Քարտեզ 1-ում ո՞ր գետն է նշված Գ տառով:

- 1) Տիգրիս
- 2) Եփրատ
- 3) Ինդոս
- 4) Ճորոխ

18

Ո՞ր շարքում են Եվրասիայի լճերը դասավորված արևմուտքից արևելք ճիշտ հերթականությամբ:

- 1) Բալխաշ, Լադոգա, Սևան, Արալ
- 2) Արալ, Սևան, Լադոգա, Բալխաշ
- 3) Լադոգա, Սևան, Արալ, Բալխաշ
- 4) Սևան, Լադոգա, Բալխաշ, Արալ

19

Հարավային Ամերիկայի հարթավայրերից ո՞րն է սարահարթ:

- 1) Պատագոնիայի
- 2) Ամազոնի
- 3) Օրինոկոյի
- 4) Լա Պլատայի

20

Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կենտրոնական մասում հատկապես արևմուտքից արևելք տարածվում են անտառատափաստաններն ու տափաստանները:
- 2) Մեծ Ավազան սարահարթում տարածվում են կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները:
- 3) Առավել մեծ տարածում ունեն անապատներն ու կիսաանապատները:
- 4) Տոնադոն հատկապես մեծ ավերածություններ է առաջացնում Կենտրոնական Ամերիկայում:

21


Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Նեդոսի հովիտը Սահարայի ամենախոշոր և հնագույն օազիսն է:
- 2) Նեդոսը ստորին հոսանքում լեռնային գետ է:
- 3) Նեդոսը հոսում է միայն հասարակածային, մերձհասարակածային և մերձարևադարձային գոտիներով:
- 4) Սպիտակ և Կապույտ Նեդոսները միախառնվում են Ասուան քաղաքի մոտ:

22

Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում Գ բնակավայրը՝ ըստ նկար 3-ի:

- 1) հասարակածային
- 2) հարավային մերձարևադարձային
- 3) հյուսիսային բարեխառն
- 4) հարավային մերձհասարակածային



նկար 3

23

Բնութագրումով որոշել մայրցամաքը:

Ամենաշոր մայրցամաքն է: Այստեղ բացակայում են բարձր լեռները, սառցադաշտերը և գործող հրաբուխները: Ո՞ր մայրցամաքի մասին է խոսքը:

- 1) Անտարկտիդա
- 2) Հարավային Ամերիկա
- 3) Աֆրիկա
- 4) Ավստրալիա

24

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլի կարևոր իրադարձությունն չէ.

- 1) Չեխոսլովակիայի տրոհումը
- 2) Հարավսլավիայի փլուզումը
- 3) Հնդկաստանի անկախացումը
- 4) Գերմանիայի վերամիավորումը

25

Ո՞ր տարածաշրջանին են առավել շատ բնորոշ երկրաչափական ու աշխարհագրական սահմանները:

- 1) Լատինական Ամերիկա
- 2) Աֆրիկա
- 3) Հարավարևելյան Ասիա
- 4) Եվրոպա

26

Ընտրել «պետություն-կառավարման ձև» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|-----------------------------------|
| 1. Կատար | ա. նախագահական հանրապետություն |
| 2. Դանիա | բ. բացարձակ միապետություն |
| 3. Գերմանիա | գ. սահմանադրական միապետություն |
| 4. Բրազիլիա | դ. խորհրդարանական հանրապետություն |

- 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

27

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:
- 2) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով:
- 3) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը, ցածր բնական աճը:
- 4) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:

28

Բազմազգ պետություն է.

- 1) Իտալիան
- 2) Հայաստանը
- 3) Ճապոնիան
- 4) Հնդկաստանը

29

«Մշակաբույս-առաջատար երկիր» գույգերից ընտրել սխալը.

- 1) եգիպտացորեն-ԱՄՆ
- 2) շաքարեղեգ-Ուկրաինա
- 3) բրինձ-Չինաստան
- 4) ձիթենի-Իսպանիա

30

Ո՞րն է Կանադայի մայրաքաղաքը:

- 1) Մանագուա
- 2) Հավանա
- 3) Գվատեմալա
- 4) Օտտավա

31

Ո՞ր գետը չ/ հոսում Ֆրանսիայի տարածքով:

- 1) Սենը
- 2) Օդերը
- 3) Ռոնը
- 4) Լուարը

32

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 2) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:
- 3) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 4) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:

33

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:
- 2) Կասպից ծովի ափամերձ շրջաններում գլխավոր մշակաբույսը փյունիկյան արմավենին է:
- 3) Երկիրը հարուստ է ջրային ու անտառային ռեսուրսներով:
- 4) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչոր շրջանն է:

34

Ո՞ր երկիրը աշխարհում առաջատար չէ մեղվաբուծության արտադրանքի ծավալով:

- 1) Ռուսաստան
- 2) Մաուրյան Արաբիա
- 3) ԱՄՆ
- 4) Մեքսիկա

35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում *չեն* գտնվում:

- 1) Կուբան և Գվատեմալան
- 2) Պարագվայը և Բրազիլիան
- 3) Լիբիան և Մարոկկոն
- 4) Արգենտինան և Չիլին

36

Ո՞ր տարածաշրջաններում է տարածվում անագի գոտին:

- 1) Լատինական և Հյուսային Ամերիկա
- 2) Հարավարևելյան և Հարավային Ասիա
- 3) Հարավային և Արևելյան Աֆրիկա
- 4) Հյուսիսային և Հարավային Եվրոպա

37

ԱՄԵԱՆԻ - ի անդամ երկրներ են.

- 1) Ավստրալիան և Թուրքիան
- 2) Ռուսաստանը և Ճապոնիան
- 3) Ինդոնեզիան և Սինգապուրը
- 4) Չինաստանը և Վրաստանը

38

Բնակչության թվով գերխոշոր երկիր է.

- 1) Մեքսիկան
- 2) Գանան
- 3) Ավստրալիան
- 4) Պերուն

39

ԱՄՆ - ին են պատկանում.

- 1) Կուրիյան կղզիները
- 2) Ֆոլկլենդյան կղզիները
- 3) Բահամյան կղզիները
- 4) Հավայան կղզիները

40


Լատինական Ամերիկայի տեղաբնիկ ժողովուրդներից *չեն*.

- 1) ինկերը
- 2) բուշմենները
- 3) մայաները
- 4) ացտեկները

41

«ԼՃեր-գոգավորության ծագում» գույգերից ընտրել *սխալը*:

- 1) Սևանա, Վանա-տեկտոնահրաբխային
- 2) Ուրմիա, Ակնա-սողանքապատվարային
- 3) Փարվանա, Խանչալի-հրաբխային
- 4) Քարի, Սև-սառցադաշտային



քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում n° ը լեռնաշղթան է նշված Բ տառով:

- 1) Մեղրու
- 2) Բարգուշատի
- 3) Վայքի
- 4) Չանգեզուրի

43

Քարտեզ 2-ում n° ը լեռնանցքն է նշված Դ տառով:

- 1) Վարդենյաց
- 2) Քաջարանի
- 3) Սևանի
- 4) Որոտանի

44

Հրաբխային լեռնագագաթների ո՞ր զույգն է գտնվում Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասում:

- 1) Աբուլ, Ծաղկավետ
- 2) Սրմանց, Սիփան
- 3) Վարդենիս, Իշխանասար
- 4) Արագած, Աժդահակ

45

Մերձալպյան և ալպյան մարգագետիններում մեծ տարածում ունեն.

- 1) գայլաթաթը, երեքնուկը, անմոռուկը
- 2) մասրենին, գազը, արեղախոտը
- 3) օշինդրը, աղածաղիկը, ուղտափուշը
- 4) փետրախոտը, շյուղախոտը, կորնգանը

46

Արարատյան դաշտի գրունտային ջրերի բարձր մակարդակը ո՞ր հողերի առաջացման պատճառ է:

- 1) կիսաանապատային գորշ
- 2) մարգագետնատափաստանային
- 3) աղուտ-ալկալի
- 4) լեռնաշագանակագույն

47

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:
- 2) Բնակչության խտությունը արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է:
- 3) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:
- 4) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:

48

ՀՀ տուֆի արդյունահանման խոշոր կենտրոն է.

- 1) Մարալիկը
- 2) Արթիկը
- 3) Ապարանը
- 4) Թալինը

49

ՀՀ-ում մետաղական այրումինի արտադրությանն առավելապես նպաստել է.

- 1) տնտեսության տարբեր ճյուղերի կողմից այրումինի պահանջարկի մեծացումը
- 2) գունավոր մետաղաձուլության տարբեր ճյուղերի զարգացումը
- 3) նեֆելինային սիենիտների հարուստ պաշարների առկայությունը
- 4) Սևան-Հրազդան ջրեկների կասկադի կառուցումը

50

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
- 2) Ծիրանենու մշակության գլխավոր շրջաններից է Լոռվա սարահարթը:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 4) Հացահատիկային ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:

51

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսների ռացիոնալ օգտագործում
- 2) ռեսուրսախնայողություն
- 3) ռեսուրսների տնտեսական գնահատում
- 4) ռեսուրսաապահովվածություն

52

Ո՞ր շարքի բոլոր երկրներն են բնական ռեսուրսների պաշարների առավել մեծ բազմազանությամբ:

- 1) Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան
- 2) Կանադա, ԱՄՆ, Չինաստան
- 3) Ճապոնիա, Գերմանիա, Ավստրալիա
- 4) Ֆրանսիա, Իտալիա, Բելառուս

53

Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.

- 1) անտառաշերտերի ստեղծումը
- 2) ջրի օգտագործման փակ ցիկլերի ներդրումը
- 3) լանջերի դարավանդավորումը
- 4) բաց եղանակով շինանյութերի հանույթը

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) «Միջազգային Կարմիր գրքի» կազմման և հրատարակման աշխատանքները գլխավորում է Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը(ԲՊՄՄ):
- 2) ՄԱԳՍԵ-ն զբաղվում է հողերի երոզիայի դեմ պայքարի հիմնախնդրով:
- 3) Բնապահպանության ոլորտում երկկողմ և բազմակողմ միջպետական համագործակցության առաջին փորձն արել են Աֆրիկայի երկրները:
- 4) Սահմանային և տարանցիկ գետերի օգտագործումն ու պահպանությունը ամեն երկիր կազմակերպում է ինքնուրույն:

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 2) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սնոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
- 3) ՄԱԿ-ի մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն է ՅՈՒՆԵՊ-ը:
- 4) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:

56

Գրել այն հրաբուխների համարները, որոնք Եվրասիայում են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Դեմավենդ | 5) Կրակատաու |
| 2) Կոտոպախի | 6) Ռուխս |
| 3) Հեկլա | 7) Էրբբուս |
| 4) Կամերուն | 8) Ֆուձիյամա |

57

Գրել այն սարքերի համարները, որոնցով չափում են մթնոլորտային երևույթներ.

- | | |
|---------------|----------------|
| 1) կուրվիմետր | 5) էխոլոտ |
| 2) ֆյուդեր | 6) կողմնացույց |
| 3) սեյսմոգրաֆ | 7) անեմոմետր |
| 4) բարոմետր | 8) պալետկա |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Հնդկական օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------------|----------------------|
| 1) Ասեդի հրվանդանի | 5) Մոզամբիկի |
| 2) Մուսսոնային | 6) Գվինեական |
| 3) Բրազիլական | 7) Գոլֆստրիմ |
| 4) Գվինական | 8) Արևելաավստրալական |

59

Գրել Ճապոնական կղզեխմբի կղզիների համարները.

- | | |
|-------------------|-------------|
| 1) Հոկայդո | 5) Սախալին |
| 2) Կուրա | 6) Հոնսյու |
| 3) Ճամայկա | 7) Սիկոկու |
| 4) Նյուֆաունդլենդ | 8) Կյուսյու |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԽՍՀՄ-ի կազմում չեն եղել.

- | | |
|--------------|--------------|
| 1) Մոլդովա | 5) Տաջիկստան |
| 2) Սլովենիա | 6) Էստոնիա |
| 3) Վրաստան | 7) Սլովակիա |
| 4) Բուլղարիա | 8) Լատվիա |

61

Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Մարմարիկ | 5) Փամբակ |
| 2) Արփա | 6) Դեբեդ |
| 3) Գետիկ | 7) Հրազդան |
| 4) Որոտան | 8) Խաչենագետ |

62

ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով.

1. Ախուրյանի 2. Սպանդարյանի 3. Կեչուտի

63

Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

1. միջուկ 2. երկրակեղև 3. ասթենոսֆերա 4. միջնապատյան

64

Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը(հա), եթե ցորենի համախառն բերքը 24000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 g/հա:

65

Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330:
Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

66

Քեյփթաուն քաղաքի (Հարավաֆրիկյան Հանրապետություն) միջին ամսական ջերմաստիճանների աղյուսակն է.

Միջին ամսական ջերմաստիճանը (°C)											
հունվ.	փետ.	մարտ	ապր.	մայ.	հուն.	հուլ.	օգ.	սեպտ.	հոկտ.	նոյ.	դեկտ.
21,2	21,5	20,3	17,5	15,1	13,3	12,5	13,2	14,5	16,3	18,3	20,3

Որոշել Քեյփթաուն քաղաքի ձմեռային միջին ջերմաստիճանը:

(66-67) Պետության բնակչության թիվը 40 մլն է: Գյուղաբնակների բացարձակ թիվը 16 մլն մարդ է, իսկ տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²:

67

Որոշել բնակչության միջին խտությունը:

Որոշել ուրբանիզացման մակարդակը:

Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում:
- 2) Թեթև արդյունաբերության խոշոր կենտրոնը Շանհայն է:
- 3) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:
- 4) Հարուստ է ածխի ու երկաթաքարի պաշարներով:
- 5) Մննդի արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հիման վրա:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:

Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ճյուղերից է:
- 2) Գորգերի արտադրանքով հանրապետության առաջատար մարզերից է:
- 3) Մեքենաշինության առաջատար ճյուղերից են հաստոցաշինությունը և սարքաշինությունը:
- 4) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 5) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
- 6) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները: